ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«23» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000130

Ձեռնարկողը՝ ***«Ջինջ Արփա» ՍՊԸ***
ք. Երևան, Կոմիտաս 50, բն. 9

Գործունեությունը՝ ***«Վայոց ձորի անտառտնտեսության» մասնաճյուղի «Ջերմուկի անտառպետության» տարածքում 6.5 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 002130

<23> 12 2020թ.

«Վայոց ձորի անտառտնտեսության» մասնաճյուղի «Ջերմուկի անտառպետության» տարածքում 6.5 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ջինջ Արփա» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 5-րդ կետի ա) ենթակետի՝ անտառապատումը որպես անտառային տնտեսության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներածական մաս Նախագծվող տարածքը ամբողջովին մտնում է «Ջերմուկի» անտառտնտեսության անտառային հողերի կազմի մեջ:

Անտառապատման համար նախատեսվող տարածքը գտնվում է Ջերմուկ քաղաքի «Եղնիկ» արձանի հարևանությամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի» անտառպետության թիվ 10 քառակուսու տարածքում: Անտառապատման աշխատանքներն իրականացվելու են «Ջինջ Արփա» ՍՊԸ-ի կողմից, նպատակ ունենալով ապահովելու՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «Ջինջ Արփա» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 2014 թվականի մարտի 12-ին կնքված՝ «Կանգուն ծառուտի հատման և արժեքի փոխհատուցման» և 2014թվականի ապրիլի 25-ին կնքված «Վնասի փոխհատուցման» պայմանագրերի, ինչպես նաև 2007թ. նոյեմբերի 27-ի «Անտառային տարածքի սահմանափակ օգտագործման իրավունքի /սերվիտուտ/» պայմանագրի պահանջների կատարումը: Ընկերության կողմից անտառապատման համար նախագծված տարածքը չի համընկնում կանգուն ծառերի հատված տարածքի հետ: Այն գտնվում է համեմատաբար չոր անտառային գոտում՝ մնացորդային անտառների կազմում: Տարածքում մասամբ պահպանվել են 1960-ական թվականներին հիմնված սոճու հատուկենտ տնկարկներ, վայրի պտղատուներ և թփեր, որոնք ունեն բավարար սանիտարական վիճակ և աճի տեմպ: Անտառվերականգնման համար տարածքները հատկացվել են և աշխատանքները նախատեսվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանով:

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից անտառապատման աշխատանքների համար առաջարկվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի

«Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի անտառպետության» 6,5 հա մակերեսով տարածք, որը ներառում է 10-րդ քառակուսու 28, 37, 38, 41 և 42-րդ անտառամասերում տնկման նպատակահարմար տարածքները, որոնք ներկայումս չեն օգտագործվում որպես արոտավայր, կամ խոտհարք: Նախագծվող տարածքի թեքության աստիճանը տատանվում է 10-15⁰: Այն մտնում է համեմատաբար չոր անտառային գոտում, մնացորդային անտառների կազմում, բնութագրվում է անտառային դարչնագույն տափաստանացված (հետանտառային) հողատիպով, որտեղ տարածված է հացազգի խոտերի մասնակցությամբ մարգագետնային խոտածածկ: Տեղամասերում անտառպիտանելիության կարգը II-III է, քարքարոտության և մայր ապառների ելքը՝ 25%: Տարածքն առանձնանում է չափավոր ցուրտ և խոնավ, իսկ հարավային դիրքադրության լանջերում՝ ավելի չոր և մեղմ կլիմայական պայմաններով, որտեղ բացակայում է հիդրոգրաֆիկ ցանցը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ըստ ժամանակացույցի իրականացնել անտառվերականգնման աշխատանքներ, իսկ մինչև անտառտնկարկը անտառի շարք փոխադրելն իրականացնել խնամքի աշխատանքներ: Անտառվերականգնման համար որպես հիմնական ծառատեսակ ընտրվել է սոճի սովորական, իսկ որպես ուղեկցող ծառատեսակներ՝ վայրի պտղատուներ, լայնատերև և սաղարթավոր տեսակներ: Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի՝ անտառապատումը նախատեսվում է՝ 1 հա հաշվով, 3330 տնկատեղով, խառը տնկարկներով /խառնումը մաքուր շարքերով/:

Տնկման աշխատանքները կատարվելու են խրամատներով /քանի որ նշված եղանակով երկար է պահվում խոնավությունը/, որոնց խորությունը սահմանվում է 40-50 սմ, երկարությունը՝ 10,0 մ, իսկ միջխրամատային հեռավորությունը՝ 2,0 մ: 1 հա մակերեսում խրամատների երկարությունը կկազմի 3330 գծ. մ: Խրամատները փորվելու են տեխնիկայի /ակոսահան տրակտոր/ միջոցով, կուտակելով հողն անմիջապես խրամատի երկայնքով: Տնկման գործընթացի ժամանակ հողի հետլցումն իրականացվելու է ձեռքով: Տնկանյութին համապատասխանող չափորոշիչները սահմանված են ԳՈՍՏ 3317-90–ի տնկանյութին ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ որակական հատկանիշները և տեսակային կազմը համաձայնեցվել են «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի համապատասխան մասնագետների հետ: Տնկանյութը ձեռք է բերվելու երեք տնկարաններից /պայմանագրերի պատճենները կցված են հայտում/:

Նախագծված հատվածում անտառվերականգնման համար օգտագործվելու են հետևյալ ծառատեսակները՝ Արոսենի ամոքիչ, Արոսենի սովորական, Թխկի բարձրլեռնային, Խնձորենի արևելյան, Կաղնի ամառային, Կաղնի արևելյան, Կեչի Լիտվինովի, Կեռասենի անտառային, Հացենի կանաչ, Սալորենի չռված, Սոճի կովկասյան, Տանձենի կովկասյան: Միջշարքային հեռավորությունը սահմանվում է 3,0 մ, իսկ միջբույսայինը՝ 1.0 մ: Անտառապատման ընդհանուր՝ 6,5 հա մակերեսում տնկանյութի քանակը ընդհանուր կկազմի 21645 հատ, իսկ 1.0 հա տարածքում տնկանյութի թիվը կկազմի 3330 հատ: Ըստ տնկման սխեմայի՝ 1.0 հեկտարի հաշվով ծառատեսակները կկազմեն՝ 33% վայրի պտղատուներ, 34% լայնատերև սաղարթավոր տեսակներ, 33% սոճի: Լայնատերև և վայրի պտղատու տնկիների բարձրությունը չպետք է գերազանցի 70-80 սմ-ը, իսկ սոճու տնկանյութը՝ 20-30 սմ: Դաշտ տեղափոխված տնկանյութը պետք է տնկվի 1-2 օրվա ընթացքում, տնկանյութը պետք

լինի առողջ՝ առանց մեխանիկական վնասվածքների: Տնկիների կպչողականության և պահպանման համար կարևոր են 5 տարիների ընթացքում խնամքի միջոցառումները, այդ թվում՝ ագրոտեխնիկական խնամք, քաղհան, փխրեցում, խոտհունձ: Նշված միջոցառումները նախատեսվում են՝ առաջին տարում 5 անգամ, երկրորդում՝ 4 անգամ, երրորդում՝ 3 անգամ, չորրորդում՝ 2 անգամ, հինգերորդում՝ 1 - 2 անգամ (ըստ խոտի աճի): Խոտհունձն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ միայն միջշարքային տարածություններում: 75-80% կպչողականության պայմաններում լրացման աշխատանքներ չեն իրականացվելու, իսկ ցածր ցուցանիշի դեպքում լրացումը կատարվում է այն տեսակով, որն անկում է ապրել: Քանի որ տարածքը պահպանվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից և չի օգտագործվում որպես արոտավայր, կենդանիների մուտքը փակող ցանկապատ նախատեսված չէ:

Չորային տարիներին իրականացվելու է մասնակի ոռոգում /7-8լ մեկ տնկու հաշվով/: Ոռոգման աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով Ընկերությունը կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Տնկման աշխատանքներում որպես աշխատուժ՝ 20 օր տնկման ժամանակահատվածի համար ներգրավվելու է 10 մարդ: Աշխատողների համար աշխատանքների ընթացքում կապահովվեն սանիտարական և կենցաղային պայմաններ: Հողածածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը: Պետք է բացառվի տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս: Արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում հողային ծածկույթի աղտոտումը կանխելու նպատակով կտեղադրվեն կենցաղային թափոնների աղբամաններ:

Հայտում վերլուծվել են գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը, ներառելով՝ շրջակա միջավայրի բաղադրիչները /օդային ավազան, հողային ռեսուրս մակերևութային ջրեր, անտառային էկոհամակարգ, կենսաբազմազանություն/ և սոցիալական բաղադրիչը և առաջարկվել են դրանց հետևանքների կանխարգելմանը, նվազեցմանը/բացառմանը և փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Անտառմշակույթի հիմնադրման աշխատանքներում կարևորվել և բացառվել է ինվազիվ բույսեր ընդգրկելը, քանի որ վերջիններս կարող են բացասաբար անդրադառնալ հարակից կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային տեղումները հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակով անհրաժեշտ է տնկիների խրամատներում ապահովել հնարավորինս ջրի շատ կուտակում: Այդ նպատակի համար արմատավզիկները հողով ծածկելուց հետո, խրամատը կամ փոսը ջուր կուտակելու համար պետք է ունենան 3-5 սմ խորություն: Անտառվերականգնման արդյունքում կկանխարգելվեն էրոզիոն պրոցեսները, կգոյանա ծածկույթ, որը կապահովի խոնավության պահպանումը հողաշերտում: Տնկիների կպչողականությունն ապահովելու համար չորային ժամանակահատվածներում նախատեսվում է ոռոգում, որի համար կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Անտառպատման համար նախատեսվող աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական աշխարհի վրա կունենա ժամանակավոր

ազդեցություն և պայմանավորված կլինի հողային ծածկույթի խախտմամբ: ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան նախատեսվել են հանված հողային ծածկույթի պահպանության և տարածքների վերականգնման/ռեկուլտիվացիայի միջոցառումներ:

Ծրագրի իրականացումը կունենա դրական ազդեցություն կենդանական աշխարհի վրա, քանի որ ծառուտում նախատեսված պտղատու-հատապտղատու տեսակները լրացուցիչ կերային բազա կհանդիսանան կենդանական աշխարհի համար, իսկ տնկարկը կհանդիսանա՝ թաքստոց, բնադրման և ստվեր ապահովող վայր:

Տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել, բացառությամբ մկնանման կրծողների: Ըստ անհրաժեշտության ծրագրի շրջանակներում կկիրառվեն կրծողների դեմ պայքարի միջոցառումներ:

Անտառտնկման հետ կապված ծախսերն ըստ նախահաշվի ընդհանուր գնահատվել են 29 550000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են հողային աշխատանքները, ոռոգումը, խնամքը, մոնիթորինգը և այլն:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ջերմուկ քաղաքում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարություններից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրակացնել, որ անտառապատման ծրագրի իրականացումն ունի իր կարևորությունը, ինչպես անտառվերականգնման, այնպես էլ քաղաքամերձ միջավայրում /Ջերմուկ քաղաք/ կանաչ գոտի ստեղծելու տեսանկյունից, քանի որ անտառն ունի սանիտարահիգիենիկ դեր, հողապաշտպան և գեղագիտական նշանակություն և հանդիսանում է ջրային ռեժիմի կարգավորիչ: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր և կարճաժամկետ բնույթ և կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների և անտառապատման համար առաջարկվող արդյունավետ միջոցառումների իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

Անտառապատման աշխատանքների հետ կապված, որպես կարևորագույն պահանջներ անհրաժեշտ է՝

- Անտառապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2007 թ օգոստոսի 30-ի Ն-1045-Ն որոշմամբ սահմանված

«Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման» կարգի Հավելվածի 8.1. կետի համաձայն:

- Տնկման աշխատանքներն իրականացնել ՀՀ Կառավարության 2013թ հունիսի 27-ի թիվ 684-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Առաջին 5 տարում իրականացնել ագրոտեխնիկական խնամքի միջոցառումներ /քաղհան, փխրեցում, խոտհունձ, ջրում, սանիտարական հատումներ/ ըստ տարիների և աշխատանքների տեսակների՝ ապահովելու համար տնկիների կպչողականությունը և պաշտպանվածությունը:

- Ծրագրի շրջանակներում ըստ անհրաժեշտության իրականացնել կրծողների դեմ պայքարի միջոցառումներ:

- Բացառել անտառտնկման աշխատանքներում ինվազիվ բույսերի ներառումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ջինջ Արփա» ՍՊԸ կողմից ներկայացված «Վայոց ձորի անտառտնտեսության» մասնաճյուղի «Ջերմուկի անտառպետության» տարածքում 6.5 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան